



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
2h-70

КОГДА КНИГА ВЗЯТА

1179 17/9
341 8/5-

БЕРЕГИТЕ КНИГУ!

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

ищите

01 JAN 2009

19 NOV 2010
2209

ԺԱՅՐԻՂԻՐ

891.99

Ա-70

Կ.Մ.

~~2276~~

Ը-30

ԵՂՈՒ ՔՈՐ ԲԱԽՏԸ

Պատմուածք



№ 7

Կենտրանա Սիօնա ան. Լենինա

գոր. Եզնու

ИНВЕНТАРИЗАЦИЯ 1936 г.

№
ԹԻՖԻՍ

Տպարան Մովսէս Վարդանեանցի
1903

14 FEB 2013

20208

ԵՂՈՒ ՔՈՌ ԲԱԽՆՁՂ

I

—Հայր սուրբ ջան, աջիդ դուրբան, մի օդութիւն արա ինձ. միայն երկու ոռորլի է պէտք, որ մեր գիւղ հասնեմ:

Ես խօսերով եկեղեցու բակում ղիմեց վարդապետին մի երիտասարդ գիւղացի, աջ թեր կապած, հէնց այն ըստէին, երբ վարդապետը կամենում էր եկեղեցի մտնել: Գիւղացու մեծ, մորթէ փափախը, տրեխները, պատուած չուխան և ցաւոտ դէմքն ակամայ զրաւեցին վարդապետի և վորքաթիւ ժամաւորների ուշագրութիւնը: Պարզ էր, որ նա նոր էր եկել Բագու և շրջապատող վարդամութեան մէջ իր փափախով և տրեխներով մի տարօրինակ հակապատկեր էր ներկայացնում:

—Ո՞րտեղացի ես, այ տղայ, —հարցրեց վարդապետը:

—Ծառայ եմ, ասբաբանցի եմ, Սաքօյի եղօն եմ. երկու շաբաթ կայ, եկել եմ Քաղու, հիմա երկու մանէթ է պէտք, որ յետ գնամ գիւղ, մեր տուն:

3198
40



Եւ գիւղացին նսրից իր աղերսալի նայուածքը յառեց վարդապետի վրայ:

Նրա արևակէղ, փոշոտ դէմքը թախիծ, վիշտ էր արտայայտում, բայց ոչ տրտոնջ, ոչ յուսահատութիւն. առաջին ակնարկից կարելի էր համոզուել, որ ձեր առաջ կանգնած է մի միամիտ գեղջուկ, որի նահապետական պարզութիւնն ու անմեղութիւնը գեռ չէին խախտուել ապականուած քաղաքի նեխուած բարոյական մթնոլորտում: Այդաեղ, այս, կար վիշտ, բայց միենոյն ժամանակ այդ վիշտն անմռունչ տանելու վճռական համբերութիւն:

—Է, լաւ, եթէ երկու շարաթէ է միայն, որ եկել ես այստեղ, էլ ինչո՞ւ ես այդպէս շուտ յետ գնում: Ինչի՞ համար էիր եկել, —լսութեամբ հարցըց հայր սուրբը:

—Ծառայ եմ, եկել էի բախտս փորձեմ:

—Փորձեցի՞ր միթէ և ինչպէս:

—Բախտս քոռ դուրս եկաւ, Աստուածաւեց, օրհնեալ լինի նրա կամքը. երկի ճակատիս այդպէս էր գրուած... ինչ անենք. Աստծու հետ հօ կոռուել չէ կարելի. աղաչում եմ, երկու մանէթ չնորհիր, դառնամ մեր գիւղ:

—Երկու մանէթ. ինչո՞ւ անպատճառ երկու, միթէ այս մեծ քաղաքում չկարողացար երկու մանէթ հաւաքել:

—Ես այստեղ ոչ ոքի չեմ ճանաչում, հայր սուրբ, մեր գիւղից մարդիկ կան, բայց

նրանց տեղը չգիտեմ. ինչ անէի. ողորմութիւն հաւաքէի. դուք մեր հայրն էք, դուք առուէք. աման, հայր սուրբ, մի խնայիր երկու մանէթը, տուք գնամ:

—Սիր երկու մանէթով ինչպէս կը գնաս Սպարան, այ տղայ, —աւելի մեղմ և կարեկցական ձայնով ասաց վարդապետը:

—Ծառայ եմ աջիդ, հայր սուրբ. չորս մանէթ տուել է ինձ զափողի տէրը. երկու մանէթ էլ պէտք է, որ այստեղից Աղստաֆա գնամ երկաթուղով:

—Իսկ այստեղից ինչ պէտք է անես:

—Աղստաֆից ուրով կը գնամ մինչև մեր գիւղ:

Այդ միջոցին եկեղեցին օրհնելու երրորդ հնչեց. վարդապետը շտապով ներս մտաւ ասելով.

—Լաւ, սպասիր այս գիշեր, վաղը կը կարգագրենք:

* *

Երեկոյ է, մութը կախել է. երկնակամարի վրայ աստղին սկսեցին փայլել. Բագուի աղմկալից փսղոցներում կառքերի, ձիաքարշների անց ու դարձն ականջ է խլացնում. մարդիկ անցնում են տենդային արագութեամբ, կարծես չարագործներ լինին, որոնց յետեկց սստիկաններ են ընկել բռնելու:

Հայոց եկեղեցու հանդէպ գտնուող հրապարակի լապտերները աղօտ, մեղմ լոյս են սփռում շրջակայքի վրայ, հեռաւում լուսում է նաև սուր սուլոցը, և ամեն ինչ ցոյց է տալիս, որ նաևթային մայրաքաղաքի բնակիչները դեռ չեն մտածում հանգստանալու, քնիլու, թէև արդէն ժամը տասն է: Փշում է «գեղավար» խեղզող քամին, որից բնակիչները կորչում են քափ քբանքի մէջ, ամենքը վաղում են այն միակ տեղը՝ քաղաքային այգին, ուր կարելի է փոքր ինչ զով ող չնշել: «Անիծուի այս տեսակքաղաքը,—լուսում են շարունակ խօսակցութեան ձայներ, —եթէ այս փողն էլ շլնէր, ոչ ոք չէր ապրիլ այս դժոխքում. ախ մեր երկրի օդ, սառն ջուր, ուր էք»:

Քնած չէ այդ միջոցին և ապարանցի եղոն, Սարգսի տղան: Վարդապետի հրամանով ժամհարը նրան թոյլ տուեց գիշերը անցկացնել եկեղեցու բակում: Պարզուելով զանգակատան լերկ սալայտակի վրայ, մօթալ փափախը զլիսի տակին դրած բարձի տեղ և պատըռտուած չուխան վրան ձգած վերմակի տեղ, նա ակնապիշ նայում է աստղաղարդ երկնքին, երբեմն-երբեմն, երեխ փալասի մէջ կապած թէի ցաւից, նրա դէմքը կծկում է, և նա «վայ նանի, վայ նանի» հառաչն է արձակում: Փողոցի աղմուկը, դղբող կառքերը, տաք և հեղձուցի «գեղավար» քամու վզզոցը չեն համնում նրա

ականջին. Նա, լուսած, ոչինչ չէ լսում. նոյն իսկ ոչինչ չէ տեսնում. գործում է միայն նրա միաքը և գործում է արագութեամբ. ծանօթ պատկերներ մէկ մէկու յետեկց գալիս, սահում են նրա առաջից. թարմանում են յիշողութիւնները, և նա, մուանալով թէի վէրքի կսկիծը, ապրում է այդ յիշողութիւններով ու պատկերներով:

* *

Ահա իրանց գիւղը. դեռ երկու շաբաթ առաջ ինքն այստեղ էր. առաւօտը, լուսածագին, վեր էր կենում, գնում դէպի աղբիւրը, զով սառն աղիւրը, երեսը մի լաւ լուանում, խաչակնքում, վերադառնում տուն. Զուշանն արդէն աղլուխի մէջ կապել է հացը և պանիրը՝ հանդը կնալու համար. փոքրիկ Մուկուչը դեռ քնած է: Եներունի հայրը՝ Սարգիս ապէքը ժամից վերադառնում է. Նա, սովորաբար, տիտուր է, երեսը կնճիւներով, խորչումներով ծածկուած. Խորին թախիծ նկարագրուած է այդ գէմբի վրայ:

— Ապէք, — ասում է եղօն, — ախս փոխանակ այդպէս հալումաշ լինելու, աւելի լաւ չէ թոյլ տաս գնամ Բագու, համ Գրիգորին գտնեմ, համ բախտս փորձեմ. կարելի է Աստուած մեղ էլ ողորմի, մենք էլ մի կտոր հացի տիրանանք, աղքատութիւնից աղատուենք:

—Այս որդի, —պատասխանում է շարունակ Սաքօն, —վորքը եղբայրդ՝ Գրիգորը գնաց. ահա ութ ամիս է ոչ մի լուր չկայ. մեռաւ, սաղ է, չգիտանք. հիմա դու էլ գնաս, ում յոյսին ես թողնում ծերունի հօրդ, խեղճ կնոջդ և երեխայիդ, ովզ պէտք է մեզ պահի և կերակըի, ովզ պէտք է աշքերս փակի, վերջին մի բուռ հողն ածի վրաս. չէ, որդի, բախտը փորձելը լաւ չէ. Աստուած եթէ ուլենայ, եթէ վճռուած է, բախտը ինքն իր ոտքով կը գայ քո դուան շէմքին կը շոքի. լաւ չէ Աստծուն փորձել. քո պապերի բոյնը, քո արտն ու արօտը մի թող. մի կտոր հաց Աստուած միշտ կըտայ. ծտերին, անասուններին կերակողը մեզ էլ կը հասնի:

—Զէ, ապէր, ինչ ուզում ես ասա, ես պէտք է գնամ. ընկերներս կիբակի օր ճանապարհ են ընկնում, ես էլ նրանց հետ. հերիք է, ինչքան քափ քըտնիքի մէջ աշխատեցինք, թող մի քիչ էլ մենք հարստանանք. ինչպէս շատերն ուրիշ տեղերից գնացել հարստացել են, մի քիչ էլ մենք հարստանանք. երկու երեք տարի կաշխատեմ Բագում, մի քիչ փող կը հաւաքեմ, կըվերադառնամ, պարագերնիս կըտանք կազմառունք մեր արինը ծծող պարտատէրից, և այն ժամանակ, մենք էլ բախտաւոր կըլինինք. ինչ ես զուր բախտիս առաջը կարինինք. ինչ ես զուր բախտիս առաջը կարուի:

ծներունին ուշադրութեամբ մտածեց աշքը զետին յասած, ապա ասաց ախ քաշելով. —Դէ դու գիտես, որդի, գնա, Աստուած քեզ հետ, գուցէ փորք եղօրսդ էլ ճարես հետդ բերես, նշանածի աշքը ճանապարհին է:

* *

Կիբակի է. գիւղը առանձին կենդանու, թիւն է սաացել. Եղոն և մի քանի իրան նման աղքատ եղիասարպներ, պատրաստւում են ճանապարհ ընկնել գէպի Աւետեաց երկիրը, սոկու հանքը. Եղոնց տանը մատաղ են արել. պատրապից յետոյ տէրտէրը և գիւղի համարները հաւաքուցին. մատաղը օրնուեց, բաժանուեց. սուփրան զցուեց, և տէրտէրն ու համիսները. Սաքօ ապօր հետ մի քանի բաժակ օղի և զինի խմեցին. Քարով գնաս, շուտավ գաս, որդի, ձեր օջախը վառ, չէն պահես. Միանաս, կշտանաս և մեզ էլ լիացնես, կշտացնես: Եղոն ոտքի կանգնած ծառայում է և շնորհակալութիւն յայտնում: Զուշանը այս ու այն կողմն է վազում հազիւ արտասուքը զսպելով: «Քեզ մատաղ, Եղօ, մեզ շմոռանաս, Գրիգորին հետդ բերես. շուտ գաս, մեր արեց շխաւարեցնես»:

Եղոն այնքան յուզուած էր, որ լաւ չէ յիշում, ինչպէս աէրտէրը «Ճէր ուզգեա զճանապարհ» կարդաց, Սաքօ ապէրը համբուլեց

ճակատը, ինչպէս ինքը հօր առաջ չորեց, օրհ-նութիւնն առաւ, ինչպէս ամաչելով, կարմրե-լով ջուշանին մնաս բարե ասաց, Մուկուչին համբուրեց և պաշարով լի խուրջինը ուսին գցելով՝ դուրս եկաւ գիւղից ու միացաւ ընկեր-ներին:

Եղօն ուրախ է. ընկերների հետ «մու-խամմազ» երգելով գնում է Դիլիջանի հրաշա-լի, զով անտառի միջով. շէ որ նրա փափագը կատարուեց, չէ որ, վերջապէս, նա գնում է բախտ որոնելու. նա կատարելապէս հաւատա-ցած է, որ այդ բախտը գտնելու է և գտնելու է Բագլում. «Ինչո՞վ եմ ես պակաս ուրիշներից, միթէ ես Աստծու ստեղծածը չեմ, միթէ ինձ պէս զօշաղ տղային Աստուած չի խղճալ: Զէ, անպատճառ կը տայ»: Միայն Եղօն չէ կարո-ղանում երեակայել, թէ ինչպէս է հարստանա-լու, ոսկիները ինչպէս են թափուելու պլխին. Նա լսել է, ոսկին թափուում է նաւթի ձեռվ. յանկարծ, հողի տակից խփում է նաւթի շատ-րուան և մի քանի ժամուայ խփածը բաւական է մարդի հարստայնելու համար: Ճիշտ է, այն հողերը, ուր գտնուում են ֆօնտանները, ձրի չեն. ամեն մարդ չունի, բայց այդ հոգ չէ: Եղօն հաւատացած է, որ կը գտնուին շատ բա-րի մարդիկ, որոնք իրանց ֆօնտանի երկու ե-րեք ժամուայ խփածը կը բաշխեն իրան, ասե-լով, ոէ, Եղօն, գնա բախտալորդիր: Ի՞նչ բան

է մի երկու ժամը նրա համար, որի ֆօնտանը ամբողջ օրերով խփում է. այդ անպատճառ կը լինի, և եղօն արդէն մտքում օրհնում է իր անյայտ բարերարին: Որպիսի եռանդով եղօն աշխատելու է այդ բարերարի համար: Նա ար-դէն ազատուած է տեսնում իրան, հօրը, ջու-շանին գիւղական վաշխառու Մկրտումի ձեռ-քից. «Ա՛ռ, ահա փողդ, այլ ևս մի ծծիլ մեր արիմնը, — շպրտում էնա չարջուն երկու հարիւ-րանոց. — քո տուած երեսուն մանէթի տեղ ստացիր երկու հարիւր, յետ տուր մեր մուր-հակը»: Ոհ, ինչպէս փայլում է ջուշանի երեսն ուրախութիւնից:

* *

Ահա և Ազստափայի կայարանը. Եղօն ա-սացին անգամն է տեսնում երկաթուղին. նա շացած է. լօկօմոտիվը նրան թւում է մի վիթխարի գաղան. խուրջինը ուսին՝ նա պլըշած-նայում է. ընկերների օգնութեամբ մի կերպ տեղատրուում է վագօնում և մինչև Բագլու հաս-նելը համարեա տեղից չէ շարժւում: Ինչքան խելքին զօռ է տակիս, նա չէ կարողանում ըմ-բռնել, թէ ինչ ոյժ է, որ մղում է երկաթու-ղին այսպէս արագ վագելու. «Այստեղ ստա-նայի ձեռք կայ», զժոռում է նա և աւելի կուշ է գալիս իր անկիմնում ու մի տեսակ թմրու-թեան մէջ ընկնում, մինչև որ ընկերներից

մինը կողքին բոթում է ու ասում. «Վեր կաց,
խուզջինդ հաւաքիր, հասանք Բագու»:

Բագու անոնից նա ցատկում է, իր իւ
ելէքտրական ցնցումից. չէ որ հասել էր իր
փափառին, չէ որ հասել էր, վերջապէս, այն
տեղը, ուր իր երազները պէտք է իրականա-
նային, ուր հարստութիւն պէտք է ձեռք բն-
րէր և գնար աղատելու իր հօրը, ընտանիքը
շարչի Միքտումի ճիրաններից, քաղցրացնելու
իր ձուշանի դաւն օրերը և պատճառելու նրան
անբաւ ուրախութիւն: «Տէր Աստուած, դու յա-
ջողիր գործս», խաչակնքեց Եղօն դորս զա-
լով վագնից, խուզջինն ուսին, մօթալ փա-
փախը գլխին և շուարած նայելով դէս ու դէն
վազող ամբոխի վրայ:

«Ո՞ւր են վազում որանք այսպէս լեզա-
պատառ,—մտածեց նա, և յանկարծ յիշեց.
—ախր չէ որ ոսկի հաւաքելու են գնում. երեխ
ամեն մարդ ուզում է ինքն առաջ ընկնի, ինքն
առաջինը հաւաքի ոսկին: Տէր Աստուած, թող
աշք քաղցը լինի իմ վրայ, ինձ ևս արժանաց-
րու այդ բախտին. ես ևս քո արարածն եմ»:

Այս մտածմունքից նրան հանեցին ընկեր-
ները և խորհուրդ տուին գնալ իրանց հետ Բա-
խտանի, ուր նա կարող է և գործ զանել, և
հղորը տեսնել:

Բալախանի նա, նոյն ընկերների օդու-
թեամբ, վարձուեց բանուոր ն. սլքմիսլայի

մէջ: Կառավարիչը, մի երիտասարդ՝ ֆրանս
ձեռվ հագնուած ինժեներ, տեսնելով նրան ա-
սաց: «Ճօ, այս բոի արջին ո՞րտեղից էր բե-
րելը: Եղօն վիրաւորուեց, բայց, նկատելով որ
իր ընկերները ինժեների առաջ խոնարհ, զլուխը
ծռած կանգնած են, կուլ առւեց վիրաւորան-
քը և լւեց: Նրան նշանակեցին օրական 60
կոպէկ վարձ և յանձնեցին վարպետներից մէկի
հսկողութեանը: Այլ ևս նա իր ընկերներից և
համագիւղացիներից ոչ ոքի շտեսաւ. ամեն
մարդ իր գործին, իր զլսի համար է մտա-
ծում. ով ժամանակ ունի յիշելու, թէ ինչ ե-
ղաւ Եղօն, ինչ է անում: Եղօն չկարողացաւ
առաջին շաբաթը որ և է տեղ գնալ. անծա-
նօթ, առանց առաջնորդի, նա շվկուած մնում
էր ամեն անգամ, երբ կամենում էր գործարա-
նից մի տեղ հեռանալ. ամեն տեղ վիշկաներ,
մեքենաներ, հորեր, սև նաւիթ, սև ցեխ. ցե-
րեկները նրան սաստիկ աշխատեցնում էին առ-
ուաւուից մինչև երեկոյ. իսկ երեկոյին նաւ-
թի մէջ կորած, սեացած, նա յոզնութիւնից
տեղն ու տեղը քնում էր միւս մշակների հետ:
Նա տանիջում էր մանաւանդ ծարաւութիւնից,
որովհետեւ չէր կարողանում խմել Բալախանու
նաւթահամ ջուրը: Եւ նա չէր հասկանում,
զլուխը կոտրում էր, բայց չէր հասկանում, թէ
ինչպէս է հարստանալու այդ նաւթի, ցեխի, կեղ-
տի մէջ, ինչպէս է զիգելու ոսկիներ: Ամբողջ մի

շաբաթ ևս չկարողացաւ որ և է տեղեկութիւն ստանալ եղրօր մասին։ Վերջապէս կիրակի առաւօտ, իր համագիւղացիներից երկու հոգի եկան և նրան տարան իրանց հետ, ասելով.

— Դնանք արակտիր, կարելի է եղրօրդ էլ այնտեղ տեսնես, բեզ էլ մի լաւ կնքենք այսօր, մարդ դառնաս, տեսնում ես բռի արջ են անուանում։

* *

Եւ ինչ տեսաւ նղօն. նրանք մտան մի ուսորեւրկիւայ պանդոկ. սկզբում նղօն սչինչ չնկատեց. ծխախոտի թանձը մուխը, բաղմաթիւ մարդկանց չնշառութիւնը առաջ էին բերել մի մշուշ, որի միջով շատ գժուար էր տեսնել, դանաղանել առարկաները և մարդկանց. սոսկալի ժխոր էր տիրում այդ պանդուում. բաժակների չըլսկոց, աղաղակներ, երգ, գոռոց գոշին, խուպոտ ձայներ, շլշերի բացուելու չտրաքոց, հայհոյանք — ամենը իրար խառնուելով մարդի ականջներն չէին խացնում։ Եղօն նստեց իր ընկերների հետ մի սեղանի առաջ. քիշ-քիշ նրա աշքերը սովորեցին տեսնել իրերը և մարդկանց, և այն, ինչ որ տեսաւ, նա երբէք չի մոռանալ։ Նա տեսաւ ուսւած բանուուներ, նստած ուսւա աղջիկների հետ, ողի, գարեջուր էին խմում և երբեմն-

երբեմն համբուրում, իրար հետ սիլի-բիլ անում։

Ամօթխած եղօն կարմրեց, ըռըշնեց. ընկերները ծիծաղում էին տեսնելով նրա այդ վիճակը և սկսեցին փսփսալ. շուտով նրանց սեղանի վրայ ևս երևացին բաժակներ, գինի, գարեջուրը։ Նրան ստիպեցին խմել, բայց նրա կոկորդից ոչինչ ցած չէր իջնում։ Նրա միտքը արագութեամբ գործում էր. նա չէր հասկանում ինչպէս տղամարդը, որ գլխին փափախ ունի դրած, կարող է հրապարակով, օտարների ներկայութեամբ, օր ցերեկով կնոջ համբուրել. օքրի ուուների աղաթն այդպէս է», մտածեց նա։ Բայց այս ինչ է տեսնում. նոյնը անում են և հայերը, իր ապարանցի ընկերները. քրտինքը կոփում է եղօյին յուզմունքից, իսկ ընկերները հոհուում են միայն, տեսնելով նմա վիճակը։

Եղօն յանկարծ ծլունկ եղաւ նստած տեղից. կարծես նրան չիկացած երկաթով դիպան կամ օձ կծեց։ Նրա շարաճճի ընկերները աշքով էին արել տրակտիրային աղջիկներից մէկին, և սա մօտենալով յանկարծ համբուրել էր նրան։ Եղօն ամբողջ մարմնով դողում էր, կարմբատակել էր սաստիկ վիրաւորուած զգալով իր ամօթխածութիւնը։ Նա, զաւակի տէր, նա, որ գիշերները նոյն-իսկ վախենալով էր համբուրում ծուշանին, այժմ իր այտերի վրայ

զգաց մի այլ կնոջ համբոյը, որ կարծես այրեց, դադեց նրան. բնազգմամբ, նա ձեռքով սկսեց սրբել այդ այրուած տեղը. Տէր Աստուած, այս մըտեղ է ընկել այս ինչ աշխարհ է, միթէ այսպէս պէտք է փող աշխատել. հարամ լինի այսպիսի փողը: Նա քիչ էր մնում լաց լինի, նա զզում էր, որ պէտք է փախչել, հեռու փախչել այստեղից, և մտածում էր այդպէս էլ անել, երբ, յանկարծ, մի անողիսի նոր բան աեսաւ, որ տեղնուտեղը մեխուած մնաց: Այս ինչ է, միթէ նա է, Գրիգորն է, իր հարազատ եղբայրը, այն ամօթխած, ամաշկոտ, հեղ, վախկոտ Գրիգորը: Եթէ պանդոկի տանիքը փուլ զար և գլխին թափուէր, եղօն այնքան չէր զարմանալ. Գրիգորը նատած անկիւնի սեղանի մօտ, հարբած, համբուրում է մի կնոջ, թէր ձգում է նրա պարանոցավ, ինչ-որ երգ է երգում խոպոտ ձայնով, նա կամենում է նորից համբուրել աղջկան, սա թոյլ չէ տալիս, ինչ-որ ասում է. Գրիգորը, ձեռքը տանելով գրպանը, հանում է մի իւզոտած, կեղաստ փողաման և հանելով թղթաղբամներ՝ առաջ 3-անոց, յետոյ ծ-անոց՝ տալիս է նրան: Աղջիկը վերցնում է և թոյլ է տալիս համբուրուել իրան. Գրիգորը զարեջուր է պահանջում, նորից խոպոտ ձայնով երգում է, նորից կամենում համբուրուել աղջկան:

Եղօն քիչ է մնում չնչասպառ լինի. նրա

աշքերը մթնանում են, կարծէր մէկը նրա գըլ-խին մի ահագին թոխմախով խիել է: Այնաեղ, գիւղում, հայրը, մայրը, ինքը, զուշանն և Մուկուչը հալւում, մաշտում են վաշխառու Մկըրտումի ձեռքին, պարտքերի մէջ խրուած. այնտեղ, գիւղում, խեղճ նշանածը անհամբեր սպասում է Գրիգորին, որ զայ փող բերի, պարտքերը տայ, պատկուի, իսկ նա, այստեղ, նա իր փողերը ծախսում է գինետնում, անառակ կանանց հետ:

Եղօն զարմանում է, որ պանզոկը փուշէ գալիս և իրանց ամենքին տակովը չէ անում: Զայը ոյթն ու կատաղութիւնը խեղդում են նրան, նա կամենում է հարայ տալ, պոռալ, բայց կոկորդը չորացել է:

3/98
40

— Տօ, ինչ ես աշքերդ չոել, նայում, կարծես մեզ ամենքիս ուզում ես ուտել. ինչ կայ, — ուսին խիելավ ասացին ընկերները, ըստ հասկանալով ինչ է կատարում եղօյի մէջ:

Եղօն միայն մատով ցոյց տաւեց Գրիգորին և աղջկան:

— Հա-հա-հա, — ըրբուացին ընկերները. — Եղբայրդ, է՞հ, ինչ անենք, ջահիլ է, զուարձանում է. սպասիր, սպասիր, թող անցնի մի երկու ամիս, դու նրանից վատթարը կանես. նստիր, նստիր, յիմար, խմիր գինին:

— Ե՞ս..., — պոռաց վերջապէս Եղօն և խելագարի նման գուրս նետուեց պանզոկից, վա-



խենալով որ չլինի ինքն ևս եղբօր պէս դառնայ, մոռանայ հօրը, մօրը, Մուկուշին, Շուշանին և չարչի Մկրտումին:

Եւ նա քայլում է անծանօթ փողոցում շշկուտած այծեամի պէս. նա փախչում է պանդոկից ինչպէս վարակիչ բայնից, բայց եղբայրը... Գրիգորը. մնաց ախր, բա ինքը ոչինչ չասի, բա թեկից շրմնի, չփորձի դուրս քաշել ցեխից: Նա յետ է դառնում շտապ-շտապ, ներս է մտնում և առանց իր շուրջը նայելու ուղիղ դիմում է եղբօր վրայ և ձեռքն ուսին դնում.

—Գրիգոր, այ Գրիգոր, էս ինչ հոդն ես տալի մեր գլխին:

Եղբայրը նայում է կարմրած աչքերով և կարծես չի հասկանում:

—Բա մեր տունը, մեր օջաղը, ախպէր, էդ ինչ օրի ես. բա քո նշանածը...

Եղբայրը բարձրանում է օրօրուելով և ուզում է զրկել եղոյին, բայց էլի ընկնում է կերտուտ նստարանի վրայ:

—Գնանք, ախպէր,—ասում է եղօն թել բռնելով և դէպի դուռը քաշ տալով, Գրիգորը թեր դուրս է քաշում, ձեռները տարածած գրկում է աղջկան... Եղօն գլուխը կախ դուրս է գնում, իսկ բազմութիւնը յետեկից հոհուում է:

Եղօն չգիտէ, չի յիշում ինչպէս նա կարողացաւ հասնել թալախանի իրանց գործարանը. նա պառկեց ամբողջ օր, ամբողջ գիշեր

նա շշմածի պէս էր, անկապ մտքերը վրդովում, խանդարում էին նրա ուղեղը. նա չկարողացաւ մի բոպէ քնել: Միայն լուսաբացին վեր կացաւ, սառն ջրով երեսը լուաց, և սե մտքերով պաշարուած՝ գլուխը քաշ զնաց աշխատելու. նա մոռանալ չէր կարողանում եղբօրն ու պանդոկը: Մի հորի գլխին կանգնած, նա սկսեց պատեցնել մեքենան, և որովհետեւ խելքը գլխին չէր, ուշքը ուրիշ աեղ էր, ոչ որ էլ, ոչ գլխաւոր վապետը, ոչ օգնականը իրան ոչինչ չէին հասկացընել, նա, մեքենան պտտեցնելիս, ձեռքը չքաշեց ժամանակին, և մեքենան ջախջախեց նրա թեր:

Նա ընկաւ ուշաթափ և երբ աշքերը բացեց՝ իրան գտաւ հիւանդանոցում. բժիշկը քննեց վէճքը, ինչոք հեղուկով սրսկեց, լուաց, կապեց և ասաց, որ կարող է բժշկուել, բայց թեր կարող է անպէտքանալ, և թղթի վրայ ուսւերէն մի բան գրելով տուեց նրան ու ճամբեց:

«Էս էլ իմ քոռ բախտիցն է», մտածեց եղօն և լուռ մոռնջ գնաց գործարանը, թեր կապած: Նա այժմ ուշքի էր եկել, և նրա համար ամեն բան պարզ էր. վէճքը նրան սթափեցը էր: Նա եկաւ բախտը փորձելու և փորձեց. Աստուած չկամեցաւ, որ նա հարստանայ. զբա համար էլ նրա թեր կոտրուեցաւ. զուր տեղն ինքը չմսեց հօրը, թողեց ի-

բանց արտերը, այգին, իրանց տունը: «Եւ ով գիտէ, —միսիթարում էր նա իրան, —այս Աստուծու կողմից մի ազդարարութիւն է. եթէ մնամ այսաւել, գուցէ ևս էլ եղքօրս նման մոռանամ ամին բան, նամուս, խիղճ, հայր, մայր, կին. չէ, չէ. վախչեմ, մի օր առաջ վախչեմ այսաւեղից, սա դժոխք է, այսաւել ես կայրուեմ, կը տոշորուեմ»: Բայց Գրիգորը. ինչ է լինելու ախր: Հա, նա մեռել է իրանց համար, այդպէս էլ կասի հօրը և մօրը:

Եղօն մտաւ կառավարիշ-ինժեների մօտ մնաս բարե անելու և խնդրելու, որ հացը հալալ անի: Մեծահոգի կառավարիշը ոչ միայն հացը հալալ արեց, այլ և շօրս ոռւբի էլ բաշխեց ճանապարհածախս: «Ճիշտ-որ բոի արջ է, —մտածել էր նա, —կարող էր մեզանից բաւական փող պահանջել վտանգուած ձեռքի համար»:

«Ինչ լաւ մարդ է», մտածեց Եղօն և գլուխ տալով դուրս եկաւ, մէջքին ձգեց իր փոքրիկ պարկը ու դիմեց երկաթուղու կայարանը: Այդտեղ նա իմացաւ, որ մինչև Աղստաֆա տոմսակն արժէ վեց ոռւբի: Ինչ անի: Երկու ոռւբի պակասում էր. ում դիմի: Հայ մշակները նրան խորհուրդ տուրդ տարդ առաջ կայացաւ, որ մինչև Աղստաֆա տոմսակն արժէ վեց ոռւբի: Ինչ անի:

Հաւերը կանչելիս Եղօն դեռ չէր քնած. լուսաբացին աշքերը ծանրացան, քունը կոխեց, և զարթնեց միայն այն ժամանակ, երբ ժամհարը կողքին բոթելով ասաց. «Վեր կաց, հէսիր քնես, գնա մշակութեանդ յետեկից»: Եղօն ոտքի կանգնեց, հագաւ չուխան, մօթալ վափախը դրեց գլխին, խաչակիքից, համբուրեց եկեղեցու գուռը ու կանգնեց բակում: Երկար նա սպասեց. արեն արդէն մի քանի կանգուն բարձրացել էր երկնիք վրայ, երբ, վերջապէս, մի քանի անգամ ժամհարին աղաշանիք պաղատանիք անելուց յետոյ, նրան թոյլ տուին մըտնել հայր սուրբի մօտ: Մտնելով, Եղօն մօթալ վափախը վերցրեց, մօտեցաւ, համբուրեց վարդապակետի աջը և գլուխ տուեց երեք ուրիշ աղաների ևս, որոնք նստած էին նրա մօտ:

—Այս աղաներին, —ասաց վարդապետը, —նեղութիւն եմ տուել զան այսաւեղ քո գործի համար. սըանցից երկուսը աղվօկատներ են, միւսը բժիշկ: Պատմիր, տեսնենք ինչ ես ու զում:

—Եառայ եմ, ես ոչինչ չեմ ուզում. խնդրում եմ ինձ երկու ոռւբի տար, որ կարողանամ մեր գիւղը հասնել:

Վարդապետը աշքով արեց աղաներին.

նրանցից մինը դիմուց եղօյին.

—Անունդ ինչ է, որտեղացի ես;

—Ծառաղ, Սարօյի եղոն, ապարանցի է:

—Ինչու էիր եկել Բագրւ:

—Եկել էի բախտս փորձեմ, մի քանի շահու տիրանամ, պարտքից ազատուեմ:

—Եհ, բախտդ փորձեցիր, որ հիմա կամենում ես վերադառնալ:

—Հրամանքս, փորձեցի. բախտս քոռ դուրս եկաւ:

—Ի՞նչպէս թէ քոռ դուրս եկաւ:

—Ենպէս. Աստուած շուդեց որ հարստանամ, տուեց թևա ջարդեց: Հիմա պէտք է մեր տուն վերադառնամ. Երկու մանէթ պէտք է:

—Լսիր, Եղօ, —վերկացաւ վաստաբանը և, մօտենալով, կանգնեց նրա առաջ, —լսիր, բախտըդ, ընդհակառակը, շատ լաւ բերել է. դու հիմա կարող ես հարստանալ:

Եղօն զարմացած նայում էր վաստաբանին:

—Հասկանմամ ես, ինչ եմ ասում. դու կարող ես հարստանալ:

—Ի՞նչպէս, աղա:

—Այ, այնպէս, որ դու գանկատ կըտաս զավոդի տիրոջից զատարանին և կըպահանջիս երկու հազար ոռութի. դատարանն էլ կըվճռի առնել նրանից այդ փողը և տալ քեզ:

—Քայց ինչի՞ համար, ինչ է արել ինձ զավոդի տէրը, որ նրանից գանգատ տամ:

—Ի՞նչ է արել. Նա է մեղաւորը, որ թեկ կոտրուել է:

—Նա է մեղաւոր, —բացականչեց Եղօն.

—Հէ, աղա, հոգի ունեմ տալու Աստուածուն. Նա իսկի էլ մեղաւոր չէ. Նա ինչ անի, խեղճը. Ես նրա երեսն անգամ չեմ տեսել:

—Բաս ովկ մեղաւոր, յիմար, —զայրացած տսաց վաստաբանը:

—Ո՞վ, իմ քոռ բախտը. Աստուած չուզեց, որ ես հարստանամ, տուեց թևս ջարդեց. Եթէ ուղէր, թևս սաղ կըմնար, ես էլ կաշխատէի, մի օր էլ գուցէ զավոդի տէրը խղճար ինձ, իր նաւթի հօրի մի օրուայ խփածը տար ինձ: Զէ, աղա, հոգի ունեմ տալու, զավոդի տէրը ոչ մի մեղք չունի. դեռ մարդն ինձ չորս սուբլի բաշխեց, Աստուած նրա երեխաներին պահի:

Վարդապետի, երկու վաստաբանների և բժշկի շանձերը՝ համոզելու Եղօյին, որ զավոդի տէրն է մեղաւոր, որովհետև նա չպէտք է անփորձ, խամ մարդին այնպէս վտանգաւոր փորձ յանձնէր, պէտք է ցոյց տար մեքենան գործածելու եղանակը—ապարդին անցան: Եղօն չկամեցաւ համոզուել, այլ շարունակ կըկնում էր.

—Ո՞չ, նա իսկի էլ մեղաւոր չէ. մեղաւորն իմ քոռ բախտն է:

Անձարացած, վարդապետը տուեց նրան

Հինգ ոռութիւն, և Եղօն, լսոր զլուխ տալով, մեկնեց: Ճանապարհին նա մի խանութից մի քիչ հաց ու պանիր գնեց, դրեց խուրջինի մէջ, մի փոքրիկ էլ խաղալիք գնեց Մուկուչի համար և գնաց կայարան:

Եղօն ազատ շունչ քաշեց, երբ հասաւ
Ազտափա, իսկ երբ շնչեց Դիլիջանի անտառ-
ների օդը, խմեց աղբաւրների պաղ, քաղցր
ջուլը, նա վերակենդանացաւ:

Նա քայլում էր ու մտածում իր կեանքի այդ վերջին երկու շաբաթի մասին, եղբօր մասին, այն զարհուրելի պանդոկի մասին: Մի քանի օրից յետոյ նա զիւդ հասաւ:

—Եղօ, որդի, ի՞նչ շուտ, էս ի՞նչ օրում:

— Ապէլ, բախտս փորձեցի և քոռ դուրս
եկաւ. Ճեղքս էլ վրան դրի:

—Եղբայրուն...

—Ել մի հարցըու, նա աննամուս է, նա
մեռած է մեղ համար:

—Փառք քեզ Աստուած,—մրմնջաց ծերունին լայակամած.—ըստ կամքն է:

—Փառք քեզ Աստուած, —կրկնեց ոռոին:

Եւ վերստին սկսուեց զիւղական կեանքն
իր արա ու արօտով, իր վար ու ցանքով, իր
հնագմնդ ճակատագրով:



ՀՀ Ազգային գրադարան



NL0329782

20.208